ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» սեպտեմբերի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 21-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի N 1190-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացման նպատակով գիտական ստորաբաժանումների վերազինմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Շ. Աղաբեկյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը կոմիտեի ինտերնետային կայքում.

2) կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Կ. Ղարիբյան)՝

ա. մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվության տրամադրումը,

բ. ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

գ. ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական թեմաների ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

դ. կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը.

3) կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ռուզան Ասատրյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ